ՀՏԴ 991(479.243)

Պատմություն

Արմինե ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱրՊՀ պատմության և քաղաքագիտության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.
E-mail: armine.arustamyan@mail.ru

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԶԱՎԹՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ/1918-1920ԹԹ./: ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԸ

Սույն հոդվածում ներկայացված են մի շարք փաստարկներ կապված Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հետ 1918-1920թթ.: Ադրբեջանական պատմագիտության մեջ միտումնավոր կերպով խեղաթյուրվում են մի շարք մանրամասներ կապված դարաբաղյան հիմնախնդրի հետ: Գաղտնիք չէ, որ Ադրբեջանի զավթողական քաղաքականությունը Ղարաբաղի և մյուս հայկական տարածքների նկատմամբ պայմանավորված էր թուրք-ադրբեջանական դաշինքի և վերջինիս կողմից ընդունած պանթուրքիզմի գաղափարախոսությամբ: Եվ ադրբեջանական պետության ստեղծումը, և՝ նրա կողմից որդեգրված պատմագիտական միտքը հիմնված էիր նույն զավթողական գաղափարախոսության վրա: Հոդվածում ներկայացված են ադրբեջանական պատմագիտության կողմից կատարված խեղաթյուրումներ, որոնք մեր կողմից հակադարձվում են իրական պատմական փաստերով:

Բանալի բառեր՝ Ադրբեջանական, պատմագիտություն, համագումար, խեղաթյուրում, պանթուրքիզմ, արցախահայություն, հիմնախնդիր, ազգային, ինքնորոշում, զավթողական քաղաքականություն

А.ХАЧАТРЯН

АРЦАХСКАЯ ПРОБЛЕМА В КОНТЕКСТЕ ТУРЕЦКО-АЗЕРБАЙДЖАНСКОЙ ЗАХВАТИЧЕСКОЙ ПОЛИТИКИ

/1918-1920ГГ./. ИСКАЖЕНИЯ АЗЕРБАЙДЖАНСКОЙ ИСТОРИЧЕСКОЙ НАУКИ

В этой статье представлены некоторые аргументы по проблеме Нагорного Карабаха относящиеся к 1918-1920гг. В азербайджанской историографии умышленно фальсифицируется ряд деталей, связанных с карабахской проблемой. Не секрет, что агрессивная политика Азербайджана по отношению к Арцаху и другим армянским территориям была обусловлена турецко-азербайджанским союзом, которая руководствовалась идеологией пантюркизма. Создание азербайджанского государства, и его историграфическая мысль основывались на известной захватнической идеологии. В статье представлены фальсификации, которые опровергаются реальными историческими фактами.

Ключевые слова: Азербайджанская, историография, конференция, фальсификация, пантюркизм, армяне Арцаха, проблема, национальное самоопределение, захватническая политика.

A.KHACHATRYAN

ARTSAKH CONFLICT IN CONTEXT OF TURKISH-AZERBAIJAN CONQUER POLOTICS (1918-1920). THE DISTORTION OF AZERBAIJAN HISTORIOGRAPHY.

In this article is presented a group of valid points about Nagorno Karabakh conflict 1918-1920. Azerbaijan histology deliberately pervaded a lot of details about conflict in Karabakh. It is not secret that the conquest politics of Azerbaijan toward the Karabakh and other armenian territories, was conditioned Turkish-Azerbaijan agreement and converted Pan-Turkizm ideology. The creation of Azerbaijan republic and adopted historical idea by them was based on the same conqueror ideology. In this article is presented distortions by Azerbaijan histology, which was inversed with real, historical facts by us.

Key words: Azerbaijan, histology,conferance, falsification, pan-tyurkizm, armenians of Artsakh, problem, national self-determination, conqueror politicy

Պատմագիտության միակ սկզբունքը պետք է հանդիսանա փաստարկված ճշմարտությունը: Անթույլատրելի է պատմագիտությունը ծառայեցնել սեփական երկրի որդեգրած արտաքին քաղաքական ռազմավարությանը: Ադրբեջանական պատմագիտության մեջ ցավոք խեղաթյուրվում են հայոց պատմության բազմաթիվ հարցեր, քողարկվում պատմական ճշգրիտ իրողությունները: Հատկապես նմանօրինակ խեղաթյուրումներ առկա են Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի հետ կապված: Սույն հոդվածում կփորձենք անդրադառնալ դրանցից մի քանիսին և հակադարձել դրանց իրական պատմական փաստարկներով: Հայտնի ճշմարտություն է, որ Ադրբեջան

պետության ստեղծումն ու կազմավորումը տեղի է ունեցել 1918թ., երբ նոր քաղաքական իրողություններով պայմանավորված, անհրաժեշտություն ծագեց լուծարել Անդրկովկասյան սեյմը և հիմնել անկախ պետություններ: Այսպես 1918թ. մայիսին հռչակվեց Ադրբեջանի դեմոկրատական հանրապետությունը, որը ստեղծվեց ոչ թե ազգային պատմական ժառանգության հենքով, այլ բացառապես Թուրքիայի նախագծով և հովանավորությամբ: Ռուս հայտնի պատմաբան Բարտոլդը ասել է. <<Ադրբեջան անունն ընտրվեց, քանի որ երբ հռչակվեց Ադրբեջանի հանրապետությունը, ենթադրվում էր, որ պարսկական և այդ Ադրբեջանը կկազմեն մեկ ամբողջություն: Այդ հիմնավորմամբ՝ էլ ընդունվեց Ադրբեջան անվանումը>>:[1] Եթե չլիներ Թուրքիան, Ադրբեջանի ստեղծման հավանականությունը միանգամայն զրոյական էր: Անդրադառնանք ասածը հիմնավորող մի քանի փաստերի. Նախ այն մասին, որ Ադրբեջան պետության ստեղծման հանգամանքներն արհեստածին էին և պատմականորեն ոչ հասունացած: Մեր խորին համոզմամբ ազգային անկախության հռչակումն առաջին հերթին արդյունք է ազգային կենսագործունեության երկարատև ընթացքի, պատմական բովանդակալից ժառանգության և հարուստ փորձի: Պետականակերտման գործընթացներն առանց հիմքի չեն կարող ընթանալ: Նման հիմք ստեղծում է պատմական կենսուղի անցած, արտաքին ու ներքին մարտահրավերների դիմակայած ազգը: Անդրկովկասում մինչև 1918թ. Ադրբեջան անունով որևե պետություն գոյություն չի ունեցել: Տեղին է նշել Ադրբեջանի ազգային խորհրդի նախագահ Ռասուլզադեի միտքը. «Ադրբեջան հասկացողությունը դուրս եկավ աշխարհագրական, ազգագրական և լեզվաբանական նշանակության սահմաններից՝ ձեռք բերելով խոր քաղաքական նշանակություն»[2]: Փաստորեն վերջինս փաստում է, որ մինչ 1918թ. նման անվանումով քաղաքական նշանակության որևէ պետական միավորում չի եղել: Ադրբեջանի՝ որպես քաղաքական միավորման ստեղծման հիմքում պանթուրքիզմի ազգային զավթողական գաղափարախոսությունն էր, դրանով է բացատրվում Ադրբեջանի ստեղծման իսկ պահից նրա վարած ծավալապաշտական, նվաճողական քաղաքականությունը: Ադրբեջանցի պատմաբանների աշխատություններում չի թաքցվում պանթուրքիզմի դերակատարությունը Ադրբեջան պետության ստեղծման գործում: Այսպես, խոսելով ազգային շինարարության գործընթացների մասին՝ նշվում է, որ 20-րդ դարասկզբին թաթարական հասարակության մեջ ազգայինը չէր ստվերել ազգագրականին, տեղին է ասել՝ այն ընդամենը իրենից ներկայացնում էր ոչ այլ

---

[1] ***Понамарев В.***, *Социально-экономические причины возникновения межэтнического конфликта в Нагорном Карабахе и вокруг него в конце 1980-х- начале 1990-х гг., с. 33.*

[2] ***Исмаилов Э.***, *Очерки по истории Азербайджана, Москва, 2010, стр. 225.*

ինչ քան էթնիկական հանրույթ: Միաժամանակ պետք է ասել, որ ընթանում էին սեփական ազգային դիմագիծը ստեղծելու գործընթացներ, որոնց պարագլուխներն էին պանթուրքիստներ Աղաևը, Հուսեյն Զադեն, Ռասուլզադեն որոնք սակայն չնայած առաջ էին քաշում Ադրբեջանի՝ Թուքիայից առանձնացման պահանջը, սակայն առանձնացման քողի ներքո իրականում արտահայտում էին Օսմանյան Թուրքիայի հետադիմական զավթողական գաղափարախոսության՝ պանթուրքիզմի ընդհանուր ռազմավարությունը: Ադրբեջանի Հանրապետության հռչակումը ազգային ինքնագիտակցության հասունացման օրինաչափ արդյունք չէր: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, դա պանթուրքիզմի տեղային արտահայտություն էր, թուրքիզմ, կամ ադրբեջանիզմ: Այսպես ադրբեջանական հեղինակներից Ա. Բալաևը իր հոդվածներից մեկում խոսելով ադրբեջանցիների կազմավորման մասին, գրել է.<<Մի իրավիճակ, երբ ինքնագիտակցությունը հիմնված էր ոչ թե ազգային-էթնիկական, այլ **կրոնական և տարածքային պատկանելության վրա,** բնորոշ էր առանց բացառության բոլոր ադրբեջանական թուրքերին: Այդ պատճառով իսլամը մնում էր Ադրբեջանի բնակչության ինքնակողմնորոշման հիմքը[1]>>: Ըստ Պանամարյովի.<<19-20դդ. Ադրբեջանի բնակչությունը չուներ արտահայտված ազգային ինքնագիտակցություն>>:[2] Պետք է ասել, որ կովկասյան մուսուլմանական զանգվածների մոտ 20-դդ դարի առաջին տասնամյակում իշխում էր հենց պանիսլամիզմի գաղափարախոսությունը, երբ ազգային շարժում որպես այդպիսին չկար, կար կրոնական մոլեռանդություն, երբ հանրույթը միավորվում և գործում էր իսլամի շուրջ: Այս մասին հստակ նշում է ադրբեջանցի պատմաբան Բալաևը՝ մեջբերելով մուսավաթ կուսակցության առաջնորդ Ռասուլզադեի խոսքերը: Վերջինս գրում է «…ազգ հասկացությունը չուներ հստակ նշանակություն, քանի որ ազգային շարժման առավել ակտիվ առաջնորդները Ախմեդ բեկ Աղաօղլուի գլխավորությամբ այդքան էլ լավ չէին տարբերում իսլամիզմը թուրքիզմից, և պայքարում էին ոչ թե թուրքիզմի, այլ մուսուլմանականության համար»: Այն որ Ադրբեջանի և ադրբեջանցիների ձևավորման հիմքում ոչ թե ազգային գործոնն էր, այլ կրոնական մոլեռանդությունն ու ավելի ուշ արդեն թուրքիզմի և պանթուրքիզմի ծայրահեղ զավթողական, շովինիստական գաղափարախոսությունը, փաստենք նույն հեղինակով. Ներկայացնելով կովկասյան թաթարների մոտ սկիզբ առած ազգային խմորումները՝ նա նշում է. <<Սկզբնական շրջանում որևէ էական տարբերություն թուրքիզմ, պանթուրքիզմ և պանթուրանիզմ տերմինների միջև

[1] *www. 1905.az*

[2] ***Понамарев В.,*** *Социально-экономические причины возникновения межэтнического конфликта в Нагорном Карабахе и вокруг него в конце 1980-х- начале 1990-х гг., с. 33.*

չկար>>[1]: Ըստ Բալաևի՝ 20-րդ դարասկզբին միայն մուսուլմանական հասարակության մեջ աստիճանաբար սկիզբ են առնում կրոնից դեպի ազգային տարրը կողմնորոշման գործընթացներ: Խոսելով կովկասյան պանթուրքիստների մասին նա հիշատակում է Հուսեյն Զադեին, ում համար **<<ազգային իդեալը դա Թուրանի ստեղծումն էր, մի իդեալական երկրի, որը պիտի հանդիսանա թուրքական ժողովուրդների միությունը>>:** Ուշադրություն հրավիրենք հետևյալ փաստի վրա. սա ասում է այն ադրբեջանցի պատմաբանը, ով հայերին մեղադրում է Մեծ Հայքի սահմանների վերականգման ցանկության մեջ, այն հայկական պետության, որի գոյությունը փաստված է բոլոր արժանահավատ հնագույն աղբյուրներում, որի գոյությունը պատմական փաստ է, իսկ Թուրանը, որին երազում է ադրբեջանցին, ենթադրում է ցեղասպան գործողություններով ստեղծվելիք երևակայական հայրենիք: Բալաևը Ադրբեջանի ստեղծման գործում առանձնացնում է Ռասուլզադեին, ում գործունեությունն ուղղված էր պանթուրքիզմի այլընտրանքային՝ ադրբեջանիզմի զարգացման գործընթացին: Ադրբեջանցի պատմաբանի բերած փաստարկներից պարզ երևում է, որ **Ադրբեջանի և ադրբեջանական թուրքերի ձևավորումը տեղի ունեցավ պանիսլամիզմի և պանթուրքիզմի գործադրմամբ, այլ ոչ թե ազգային գործոնի և ազգային պետականակերտման փորձի հիման վրա:** Դրան հակադարձենք նույն ժամանակահատվածում Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման նախադրյալները: Դրանք իրավամբ պիտի համարենք հայոց 5000 ամյա քաղաքակրթության, իր բնապատմական միջավայրում անընդհատ ու շարունակական ապրող հայ ժողովրդի պատմական կենսափորձի օրինաչափ արդյունքը: Վեր հանելով Ադրբեջանի՝ որպես պետության ստեղծման հիմքերը՝ հասկանալի է դառնում, թե ինչու նրա արտաքին քաղաքական ռազմավարությունը նպատակաուղղված էր հարևանների պատմական հողերի յուրացմանը, իսկ հեռահար նպատակն էր անմիջական կապ ապահովել իր ստեղծողի՝ Թուրքիայի հետ: Ասվածը կփաստի այն պարզ ճշմարտությունը, որ անհեթեթ են ադրբեջանցի պատմաբանների այն պնդումները, թե Ղարաբաղը պատմականորեն պատկանում է Ադրբեջանին, մոռանալով որ 20-րդ դարից առաջ Արևելյան Անդրկովկասում Ադրբեջան պետություն չի եղել, որն էլ ունենար պատմական տարածք: Ադրբեջանցի պատմաբան Տ. Կոչառլին գրում է. << Երբ 1918թ. մայիսին կազմավորվեցին Վրացական, Ադրբեջանական և Հայկական հանրապետությունները, նրանց սահմանները սահմանազծված չէին>>:[2] Հարց է ծագում՝ ինչպես է պատահել, որ

---

[1] ***Балаев А.***, *Мамед Эмин Расулзаде/1884-1955/, Москва, 2009, с. 14.*

[2] ***Кочарли Т.*** , *К истории карабахского вопроса/ вымыслы и действительность/, Баку, 2009, с. 62.*

չսահմանագծված Ադրբեջանը հավակնել է Ղարաբաղին և մյուս հայկական հողերին: Պատմաբանն այստեղ տալիս է ոչ ճիշտ և խեղաթյուրված պատասխան՝ նշելով, որ հանրապետությունների տարածքները կազմել են այն սահմանները, որոնք գոյություն են ունեցել ցարիզմի օրոք, Անդրկովկասի նահանգային վարչատարածքային բաժանմամբ, ուստի Լեռնային Ղարաբաղը որպես պատմական Ղարաբաղի մի մաս, մնացել է Ադրբեջանի հանրապետության սահմաններում[1]: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղին, ապա այն դեռևս 1917թ-ից ինքնակառավարվող մարմին էր: 1917թ. դրությամբ Լեռնային Ղարաբաղի բնակչության կազմն այսպիսինն էր. հայեր՝ 150.000/70տոկ., մուսուլմաններ՝ 58.000/27 տոկ./[2]:

Ադրբեջանի ստեղծման գործում Թուրքիայի դերակատարությունը վճռորոշ էր, առանց վերջինիս, հազիվ թե իրականություն դառնար Ադրբեջանի գոյությունը: 1918թ. հունիսի 4-ին Բաթումում օսմանյան կառավարության և նորահռչակ Ադրբեջանի Հանրապետության միջև կնքված դաշնագրի 4-րդ կետի համաձայն. «Օսմանյան կառավարությունը պարտավորվում էր զինական աջակցություն ցուցաբերել Ադրբեջանի կառավարությանը, եթե դրա կարիքը լինի կարգ և կայունություն հաստատելու համար>>:[3] 1918թ. հռչակված Ադրբեջանի Հանրապետության մուսավաթական կառավարությունը դեռ երկար ժամանակ հանգրվանել էր Գանձակում: Միայն 1918թ. սեպտեմբերի 15-ին թուրքական զորքերին Նուրի փաշայի գլխավորությամբ հաջողվեց գրավել Բաքուն՝ այն դարձնելով նորաստեղծ Ադրբեջանական պետության մայրաքաղաք: Տեղին է նշել Ա. Ռանսկին. <<1918թ. սեպտեմբերի 15-ին, Գանձակում հռչակված Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության կառավարությունը թուրքական սվինների օժանդակությամբ եկավ Բաքու: Մուսավաթը հաղթանակեց: Ադրբեջանական հանրապետությունը, ճիշտ է, **թուրքական հիմքով** ստացավ իր մայրաքաղաքը>>[4]: Ադրբեջանական պատմաբան Աղամալիևան թուրքական զորքի մուտքը Բաքու և նրա գրավումը համարում է փրկարար բանակի մուտք՝ գիտակցելով, որ առանց Թուրքիայի, Ադրբեջանի կայացումը հնարավոր չէր լինի: Այսքանից հետո, պարզապես զավեշտալի են հնչում ադրբեջանցի պատմաբանների այն պնդումները, թե պետականություն հռչակելուց հետո ադրբեջանական կառավարությունը իր կողմից ընդունած առաջին իսկ որոշումներից մեկով Հայաստանի Հանրապետությանը զիջեց Երևան քաղաքը: Ադրբեջանցի պատմաբանը գրում

---

[1] *Նույն տեղում:*

[2] *Տե՛ս **Հարությունյան Հ.**, Լեռնային Ղարաբաղը 1918-1921թթ., Երևան, 1996, էջ 33:*

[3] ***Исмаилов Э.**, Очерки по истории Азербайджана, Москва, 2010, с.226*

[4] ***Раевский А.**, Английская интервенция и мусаватское правительство, Баку, 1927, с. 31*

է.<< Հյուսիսային Ադրբեջանի հռչակման հաջորդ օրը առավոտյան, ադրբեջանական ազգային խորհուրդը կատարել է մի **արքայական նվեր** հայկական ազգային խորհրդին, նկատի ունի իբրև թե Երևանի զիջումը հայկական կողմին՝ ընդգծումը մերն է - **Ա. Խաչատրյան**: Հայերի հետ մենք վերջ տվեցինք բոլոր վեճերին, նրանք կընդունեն վերջնագիրը և կավարտեն պատերազմը. Մենք նրանց զիջեցինք Երևանը[1]>>: Ազգային պատկանելության կողմնորոշման փնտրտուքների մեջ գտնվող, ազգային ինքնագիտակցությունից զուրկ, պատմական հայրենիք չունեցող, 1918թ. թուրքական ազգային ծրագրերով կյանքի կոչված և թուրքական զորքի օգնությամբ մայրաքաղաք ձեռք բերած նորահռչակ պետությունն իր հարևան հանրապետությանը պատմական տարածք է զիջում. զավեշտալի է հնչում: Պանթուրքիզմի գաղափարախոսությունը որդեգրած Ադրբեջանի նվաճողական հավակնությունները տարածվում էին Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի վրա: Թուրքիային անհրաժեշտ էին տարածքներ, որոնք պիտի միավորեին թուրքերին կովկասյան թաթարների, այսպես կոչված՝ ադրբեջանցիների հետ, ուստի և մուսավաթական կառավարությունը Խան Խոյսկու գլխավորությամբ Ադրբեջանի Հանրապետության կազմում հայտարարեց Բաքվի և Գանձակի նահանգներն ամբողջությամբ: Բաթումի բանակցությունների օրերին թուրքական պատվիրակության գլուխ կանգնած Խալիլ Բեյը հայկական պատվիրակության առաջնորդ Ալեքսանդր Խատիսյանին ասել է. <<Դուք կտեսնեք, որ ճակատագիրը կը քաշե Թուրքիան արևմուտքեն արևելք: Մենք հեռացանք Բալկաններեն, կհեռանանաք նաև Ափրիկեեն, բայց մենք պետք է տարածուինք դեպի արևելք…մեր եղբայրները Բաքու, Դաղստան և Ադրբեջան են…Պահանջելով Վանը՝ դուք կփակեք մեր ճամփան դեպի Պարսկաստան, պահանջելով Նախիջևանն ու Զանգեզուրը՝ դուք արգելք կդառնաք մեզի իջնելու Քուրի հովիտը և երթալու Բաքու: Դուք պետք է մի կողմ քաշվեք և մեզի ճամփա տաք[2]>>: Ասվածից պարզ երևում է, որ ադրբեջանական հավակնությունները հայկական հողերի, մասնավորապես Ղարաբաղի նկատմամբ, թելադրված էին թուրք-ադրբեջանական հեռագնա նպատակներով և համաթուրանականության շահերին համապատասխան: 1918թ. սեպտեմբերի 18-ին Բաքվի գրավումից հետո թուրք-մուսավաթական ուժերն այնտեղ հայ բնակչության կոտորած կազմակերպեցին՝ փաստորեն շարունակելով Արևմտյան Հայաստանի հայ բնակչության ցեղասպանության շարունակությունը: Տեղի ունեցավ Բաքվի հայ

---

[1] ***Муса Марджанлы***, *Нагорно-Карабахская проблема с позиции геополитики. Аналитический ракурс, Санкт-Петербург, 2009, с. 8.*

[2] ***Խատիսյան Ա.,*** *Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Երևան, 1968, էջ 86:*

բնակչության եռօրյա սպանդ, որին զոհ գնացին շուրջ 30.000 հայեր[1]: Անհեթեթ են հնչում Նիֆտալիևի, Աղամալիևայի, Բալաևի, Իսմաիլովի և այլոց պնդումները, թե հայերն էին կազմակերպում ջարդեր: Հայերի նկատմամբ իրականացված ահասարսուռ դեպքերի մասին ստիպված էր խոստովանել ադրբեջանցի պատմաբան Աղամալիևան՝ նկարագրելով, թե ինչպես թուրք-թաթարական ուժերը մտան Բաքու <<Ադբեջանցիների վրեժի ծարավը մարտյան դեպքերից հետո, անչափ ուժեղ էր>>: Մեջբերելով Ադրբեջանի մինիստրների կաբինետի ղեկավար Խան Խոյսկու խոսքերը՝ գրում է. <<Ճիշտ է քաղաքը գրավելու ժամանակ տեղի ունեցան որոշ իրադարձություններ, որոնք լոկ ափսոսանք և տխրություն են առաջացնում. Կառավարությունը չի թաքցնում դա և գտնում է, որ նման փաստերի թաքցնումը արժանապատիվ չէ: Քաղաքը գրավվեց շուրջ 3 ամսյա մարտերից հետո, և բնակչության կատաղությունը հասել էր բարձրակետին…>>[2]: Փաստորեն, ադրբեջանցի պատմաբանը նշում է հայերի նկատմամբ տեղի ունեցած սոսկալի դեպքերը՝ միաժամանակ գրելով, որ կառավարությունը ոչինչ չէր կարող անել դրանք՝ հայերի կոտորածները, կանխելու համար: Նուրի փաշայի զորքն այնուհետև մտավ Ղարաբաղ, որտեղ սակայն հանդիպեց ուժեղ դիմադրության և հետ շպրտվեց: Լուրջ ձեռքբերում էր 1918թ. Մամնայի մոտ թուրքական զորքի ջարդը:

Դեռևս 1918թ. հուլիսի 22-ին արցախահայության առաջին համագումարը Արցախը հայտարարեց անկախ վարչաքաղաքական միավոր և ընտրեց ազգային խորհուրդ և ժողովրդական կառավարություն: Հայոց ազգային խորհուրդը, արտահայտելով գավառի բացարձակ մեծամասնությունը կազմող հայ ազգաբնակչության միասնական կամքը, արդարացիորեն պահանջում էր, որ Ղարաբաղը միավորվի մայր Հայաստանի հետ: Փաստորեն սա արցախահայության ազատ ինքնորոշման կարևոր քայլ էր, որը սակայն չընդունվեց զավթիչների կողմից: Արցախահայության դեմ սկիզբ առան նոր բռնություններ: 1918թ. սեպտեմբերի 6-ին՝ Ղարաղշլաղի անկումից 2 օր հետո, հրավիրվեց արցախահայության երկրորդ համագումարը: Աղդամում գտնվող թուրքական կովկասյան բանակի 2-րդ դիվիզիայի հրամանատար Ջեմիլ Ջահիդ բեյի անունից 2 վերջանագիր է ուղարկվում, որին ի պատասխան 2-րդ համագումարը մերժում է Ադրբեջանի կազմի մեջ մտնելու մասին թուրքական հրամանատարության և Ադրբեջանի կառավարության պահանջը: Նույն պատասխանն է հնչում նաև 1918թ. սեպտեմբերի 17-22-ը կայացած

---

[1] *Տե՛ս **Մանասյան Ա.**, «Ինչու ադրբեջանական հանրապետության ցեղասպանական վարքը արտացոլված չէ նրա քաղաքական նկարագրում», «Բանբեր Երևանի համալսարանի, Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2018 № 3 (27), էջ 25:*

[2] ***Ахамалиева Н.**, Азербайджанская демократическая республика/1918-1920/, Б., 1998, с. 46.*

արցախահայության երրորդ համագումարում: 1918թ. սեպտեմբերի 22-ին թուրք-թաթարական զինված խմբավորումները մտան Լեռնային Ղարաբաղ, գրավեցին Շուշին: Չնայած դրան, կանգուն էին մյուս շրջանները՝ Ջիվանշիրը, Ջրաբերդը, Դիզակը և Վարանդան, որոնց բնակչությունը պատրաստ էր կյանքի գնով պաշտպանել հայրենի երկրամասը: Ասվածի լավագույն վկայությունը 1918թ. հոկտեմբերի 18-ին Մսմնայի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտն էր, որտեղ ջախջախվեց թուրքական զորքը: Թուրք-մուսավաթական խրախճանքը Անդրկովկասում երկար չտևեց: Ընդամենը ամիս ու կես անց Թուրքիան պարտվեց Առաջին աշխարհամարտում և ստիպված հետ նահանջեց Անդրկովկասից՝ թողնելով Բաքուն: Անդրկովկասում տիրապետության գերակայություն ձեռք բերեցին բրիտանացիները: Վերջիններս հստակ գիտակցում էին՝ ինչպես է ստեղծվել Ադրբեջանը, ինչ է իրենից ներկայացնում: Տեղին է հիշատակել ադրբեջանցի պատմաբանը. «Երբ Էնզելի ժամանած Ադրբեջանի պատվիրակությունը մինչև Բաքու անգլիացիների գալը, գեներալ Թոմսոնին առաջարկեց ճանաչել Ադրբեջանի անկախությունը, վերջինս կտրականապես մերժեց հիմնավորելով, որ Ադրբեջան անունով հանրապետության անվան տակ մեզ հայտնի է լոկ կառավարություն՝ ստեղծված թուրքական ինտրիգների արդյունքում, որը ոչ մի հիմք ժողովրդական զանգվածների մոտ չունի»[1]: Ադրբեջանի հանրապետությունը չճանաչած և չընդունած անգլիական հրամանատարությունը շուտով փոխեց վերաբերմունքը վերջինիս նկատմամբ: Կեղծարար Հասանլին գրում է. <<Թոմսոնը սկզբնական շրջանում նույնիսկ կարևոր չէր համարում օգտագործել Ադրբեջան տերմինը, հետագայում տեղում իրավիճակին ծանոթանալուց հետո հասկացավ, որ իր ունեցած նախնական ինֆորմացիան սխալ է[2]>>: Ոչ, երիցս ոչ: Անգլիական քաղաքականությունը Ադրբեջանում ձևավորվեց հօգուտ Ադրբեջանի, և պատճառն այնուամենայնիվ Ադրբեջանը մոտիկից ճանաչելը չէր, այլ 1. նավթը, 2. Խորհրդային Ռուսաստանի գործոնը: Ինչպես նշում է Ռաևսկին. <<Կովկասյան նավթը, առավել վաղ, քան պարսկականը գրավել է անգլիական կապիտալի ուշադրությունը: Բրիտանական քաղաքականությունը ձևավորվել է հենց նավթին տիրանալու մղումով>>[3]: Երկրորդ, ընդդեմ բոլշևիկյան Ռուսաստանի, Անդրկովկասում ունենալ հենակ որպիսին կհանդիսանար Ադրբեջանը: Հեղինակը նաև նշում է, որ անգլիական հրամանատարությունն օգնեց Վրաստանին և Ադրբեջանին պետականորեն ձևավորվել և **հատկապես**

---

[1] ***Балаев А.,*** *Азербайджанское национальное движение 1917-1918гг., Баку, 1998, стр. 31.*
[2] ***Гасанлы Дж.****, Русская революция и Азербайджан: Трудний путь к независимости/1917-1920/, Москва, 2011, с. 286.*
[3] ***Раевский А.****, Английская интервенция и мусаватское правительство, с. 18-19.*

Ադրբեջանին (*ընդգծումը մերն է – Ա.Խաչատրյան*): Հատկանշական է, որ անգլիական հրամանատարության հովանավորությունը տարածվում էր միայն Վրաստանի և Ադրբեջանի վրա, Հայաստանն ընդհանրապես մերժված էր, որն իր աշխարհագրական դիրքի պատճառով չէր կարող խաղալ արգելապատնեշի դեր: Հնարավոր է նաև, որ այստեղ դեր է խաղացել նաև դաշնակցականների ռուսական կողմնորոշումը, որն անգլիացիների համար հաճելի չէր[1]>>., նշում է Ռաևսկին: Միով բանիվ, Ղարաբաղի հարցում Անգլիան պաշտպանեց իր կողմից սկզբնական շրջանում չընդունած Ադրբեջանի շահերը, և անգլիացիների լուռ համաձայնությամբ 1919թ. հունվարին Ղարաբաղ-Զանգեզուրում կազմավորվեց գեներալ-նահանգապետություն Խոսրով Բեկ Սուլթանովի գլխավորությամբ: Այսպիսով, Անդրկովկասում անգլիական քաղաքականությունը ձևավորվեց նավթային շահի առաջնահերթության և ռուսական բոլշևիզմի սաղմերը Անդրկովկասում արմատախիլ անելու նկատառումով: Ռաևսկին գրում է. << Ոչ թե ստացած նավթը, այլ դեռևս չստացված նավթը, ընդերքն էր հետաքրքրում անգլիական իմպերիալիզմին[2]>>: Հենց դա էր պատճառը, որ Ղարաբաղի, Զանգեզուրի հարցում անգլիացիների պաշտպանությունը տարածվեց Ադրբեջանի վրա, այն պետության, որին սկզբնական շրջանում իրավամբ համարում էին արհեստածին և ինտրիգների արդյունքում ստեղծված: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա վերջինիս դիրքորոշումը պարզ էր. թիկունքում ունենալով անգլիացիներին, ավարտին հասցնել բռնի ուժով Ղարաբաղին տիրանալու գործը: Չնայած հայկական կողմն անընդհատ անգլիական զինվորական առաքելությանը հայտնում էր արցախահայության նկատմամբ ադրբեջանցիների կողմից կիրառած բռնությունների մասին, այդուհանդերձ, որևէ քայլ չէր ձեռնարկվում: Ղարաբաղի ժողովրդական խորհրդի կողմից Բաքվի հայոց ազգային խորհրդին ուղղված զեկուցագրերից մեկում ասված էր.<< Մենք պատրաստել ենք համառոտ զեկուցագիր, թե ինչ հարձակումներ են տեղի ունեցել ադրբեջանական զորքերի, տաճիկների և տեղական մահմեդականների կողմից հայերի վրա, դրա պատճենները ուղարկել գեներալ Թոմսոնին, գեներալ Բիչերախովին և Ձեզ…սակայն մի ամբողջ ամսվա մեջ մեր վիճակը դրանով չի թեթևացել, այլ ավելի է ծանրացել[3]>>: Ի պատասխան Ադրբեջանի կողմից Ղարաբաղ-Զանգեզուրի նկատմամբ կատարած կամայական անօրինական նման քայլի՝ ի դեմս գեներալ-նահանգապետության

---

[1] *Նույն տեղում, էջ 24:*
[2] ***Раевский А.**,…, с. 22.*
[3] ***Ղարիբյան Ա.**, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1918-1920թթ. և Մեծ Բրիտանիան, Երևան, 2012:*
էջ 85:

ստեղծման, 1919թ. հունվարի 21-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում ընդունեց Զանգեզուր-Ղարաբաղի կառավարման սկզբունքների մասին: Այն բաղկացած էր 16 կետից, որից առաջինը ազդարարում էր, որ Ղարաբաղը և Զանգեզուրը ՀՀ անբաժանելի մասն են: Ստեղծվեց Ղարաբաղ-Զանգեզուրի շրջանային խորհուրդ: 1919թ. հունվարի վերջերից ադրբեջանական կառավարությունը կանոնավոր զորքեր է ուղարկում Ղարաբաղի դեմ: Ինչպես պարզվում է Ղարաբաղի հայոց ազգային խորհրդից ՀՀ կառավարությանն ուղղված զեկուցագրից՝ <<թնդանոթներով և գնդացիրներով զինված ադրբեջանցիները կենտրոնանում են Խանքենդում, մի քանի հարյուրյակ էլ Ասկերանում: Մեր կողմից ուղարկված բազում զգուշացումներին ի պատասխան, բրտանական միսիան միայն հաղորդում էր, որ այդ տարածքները պատկանում են Ադրբեջանին[1]>>: Ի պատասխան ադրբեջանցիների և նրանց հովանավոր անգլիացիների ջանքերին, 1919թ. փետրվարի 10-ին կայացավ արցախահայության չորրորդ համագումարը, որտեղ կայացվեց ազգային ինքնորոշման տարրին ու ոգուն միանգամայն համահունչ որոշում: Այնտեղ ասվում էր. <<Կանգնած լինելով ազգերի ինքնորոշման սկզբունքի վրա, Ղարաբաղի հայությունը հարգանքով է վերաբերվում հարևան ժողովրդի ինքնորոշման իրավունքին և միաժամանակ կտրուկ բողոքում է Ադրբեջանի կառավարության փորձերի դեմ, որն ուղղված է հայկական Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի ձախողմանը, որը երբեք չի ընդունել և չի ընդունի Ադրբեջանի իշխանությունը>>: Համագումարը պնդում է իր որոշումը թե Կովկասում դաշնակիցների ներկայացուցիչների առաջ, թե խաղաղության կայանալիք կոնֆերանսում>>: Այստեղից եզրակացնենք, որ միանգամայն անհիմն են հնչում ադրբեջանցի պատմաբանների այն պնդումները թե Ղարաբաղը ադրբեջանական տարածք է: Ի. Ալիև պատմաբանը գրում է.<< մուսավաթական կառավարության օրոք Ղարաբաղն ամբողջությամբ ընդգրկված էր Ադրբեջանի կազմում: Հենց միայն արցախահայության համագումարների ընդունած որոշումները բավական են փաստելու, որ ոչ թե Ղարաբաղը մտնում էր Ադրբեջանի կազմ, այլ Ադրբեջանն էր բռնությամբ ձգտում գրավել այն, ինչ վերաբերում է արցախահայությանը, ապա նրա ընդունած դիրքորոշումը հետևյալն էր. Ոչ մի պարագայում չընդունել ադրբեջանական իշխանությունը: Ինչպես նշեցինք, Արցախը բռնի ուժով գրավելու փորձերը անգլիացիների քար անտարբերության պայմաններում գնալով ահագնանում էին: Այդուհանդերձ, արցախահայությունը անհողդողդ էր մնում իր որոշման մեջ: 1919թ. ապրիլի 23-29-ը արցախահայության 5-րդ

[1] *Նույն տեղում, էջ 88:*

համագումարում, որտեղ մասնակցում էին նաև անգլիական ներկայացուցիչներ Շատելվորդը և գեներալ նահանգապետ Սուլթանովը, անկախ վերջիններիս կողմից ճնշումներին, համագումարը որոշեց, որ անկախ <<կուլտուր-իրավական, տնտեսական պայմանները չեն կարող հիմք ծառայել Արցախի վզին փաթաթելու Ադրբեջանի իշխանությունը»:[1] Նույն պատմաբանը, բացարձակ կերպով խեղաթյուրելով պատմական իրականությունը, գրում է. << Դարավոր մշակութային և տնտեսական կապը Ղարաբաղի և Ադրբեջանի մյուս շրջանների և Բաքվի հետ, պատճառ հանդիսացան, որպեսզի Ղարաբաղի հայ գյուղացիությունը 1919թ. իր կողմից հրավիրված 7-րդ համագումարում որոշում ընդուներ Ադրբեջանին ամբողջությամբ միավորվելու օգտին[2]>>: Ադրբեջանցի պատմաբանի մոտ առկա է փաստերի իրարամերժություն: Նախ նշում է, թե մուսավաթների օրոք Ղարաբաղը մտնում էր Ադրբեջանի կազմի մեջ, մյուս կողմից էլ նշում, թե արցախահայության համագումարը որոշում է կայացրել Արցախը մտցնել Ադրբեջանի կազմ: Նման իրարամերժությունը ինքնին խոսում է այն մասին, որ պատմաբանը չի առաջնորդվում գիտականությամբ և խեղաթյուրում է պատմական փաստերը: Հեղինակը շրջանցում է այն իրողությունները, որոնք ստեղծվել էին 1919թ. օգոստոսին արցախահայության հերթական յոթերորդ համագումարի օրերին: 1919թ. մայիսից առավել ծանրացավ արցախահայության վիճակը: Օրավուր խորացող ճգնաժամի պայմաններում յոթերորդ համագումարը որոշեց ժամանակավորապես մինչև Փարիզի խաղաղության կոնֆերանսը ճանաչել իրեն Ադրբեջանի կազմում: Ադրբեջանցի պատմաբաններն ընդհանրապես ոգևորությամբ են խոսում արցախահայության յոթերորդ համագումարի մասին՝ շրջանցելով դրան նախորդած իրողություններն ու հանգամանքները: Նույնիսկ 1989թ. Բաքվում լույս տեսած Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի պատմությանը նվիրված փաստաթղթերի ու նյութերի ժողովածուում միտումնավոր կերպով չի խոսվում մյուս 8 համագումարների մասին, որոնք բոլորն էլ մերժել են Ադրբեջանի իշխանությունը, և ներկայացվում է միայն յոթերորդը՝ որպես արցախահայության կամքի միասնական արտահայտություն՝ միանալու Ադրբեջանին: Սակայն ներկայացնենք այն պայմանները, որոնց ազդեցության ներքո ընդունվեց համագումարի վերոնշյալ որոշումը: Արցախահայության յոթերորդ համագումարը բացվեց 1919թ. օգոստոսի 12-ին, Վարանդայի Շոշ գյուղում: Սուլթանովը իրեն հատուկ դաժանությամբ փորձում էր լռեցնել հայության բողոքի ձայնը և սկիզբ առած պայքարը խեղդել արյան մեջ:

---

[1] ***Հարությունյան Հ.***, *նշվ. աշխ., էջ 163:*

[2] ***Алиев И.***, *Нагорный Карабах. История, факты, события, Баку, 1996, с. 25*

Օգոստոսի 14-ին հրանոթներ տեղադրվեցին Շոշ գյուղի ու Շուշի քաղաքի հայկական թաղամասի ուղղությամբ, փակվեց Եվլախ-Շուշի ճանապարհը: Նույն օրը նա վերջնագիր ներկայացրեց համագումարին և պահանջեց 48 ժամվա ընթացքում ընդունել Բաքվում մշակված համաձայնագիրը: Սուլթանովը սպառնում էր զենքով, եթե չընդունվի համաձայնագիրը: Արցախի ներքին և արտաքին պայմանները չափազանց անբարենպաստ էին թշնամուն դիմակայելու համար: Բացի դրանից վիճելի տարածքների հարցի լուծումը պետք է տեղի ունենար Փարիզի խաղաղության կոնֆերանսի որոշումից հետո: Ուստի համագումարի պատգամավորները որոշեցին ժամանակավորապես՝ մինչև վեհաժողովի աշխատանքների սկսվելը, ընդունել Բաքվի համաձայնագիրը: Համագումարի կողմից կազմվեց պատվիրակություն, որն էլ օգոստոսի 22-ին Սուլթանովի հետ քննարկեց և ստորագրեց 26 կետից բաղկացած համաձայնագիրը: Համաձայնագրի հիմնական բովանդակությունը կայանում էր նրանում, որ արցախահայությունը Ղարաբաղը ժամանակավորապես ճանաչում էր Ադրբեջանի կազմում մինչև հարցի վերջնական լուծումը Փարիզի խաղարարար կոնֆերանսի կողմից: Ղարաբաղի լեռնային մասը՝ Շուշիի, Ջիվանշիրի, Ջեբրայիլի գավառները (Դիզակ, Վարանդա, Խաչեն, Ջրաբերդ) իրենց ժամանակավորապես համարում են Ադրբեջանի հանրապետության սահմաններում: Այսպիսով՝ յոթերրորդ համագումարի կայացրած որոշումը եղել է ոչ թե արցախահայության միասնական կամքի արտահայտություն, այլ ընդունվել հարկադրաբար՝ արյունահեղությունից խուսափելու նպատակով: Արցախահայությունը արյան նախճիր թույլ չտալու համար իրեն ժամանակավորապես ճանաչեց Ադրբեջանի կազմում, մինչև այն պահը, երբ կրկին կբացվեր որևէ հնարավորություն միանալու մայր հայրենիքին: Օգոստոսյան ժամանակավոր համաձայնագրի ընդունումից հետո էլ Ադրբեջանը շարունակեց արցախահայության նկատմամբ ցեղասպանական քաղաքականությունը, որն իրագործվում էր թուրքական սպաների հետ փոխհամաձայնեցված: 1919թ. փետրվարին զինված խմբերով Շուշի են ժամանում Նուրի և Խալիլ փաշաները, ինչպես նաև գեներալ Նովրուզովը: Պետք է ասել, որ 1918-1919թթ. Ղարաբաղի հարցում Ադրբեջանը գործել է անգլիական գաղութարարների հովանավորությամբ և աջակցությամբ: Մուսավաթական կառավարությունը գործել է անգլիական գաղութարարների գիտությամբ, ծառայել նրան՝ ելնելով սեփական շահերից: Ռանսկին գրում է. <<Բրիտանական իմպերիալիզմի կիսագաղութային շունը/ <u>նկատի ունի մուսավաթական կառավարությանը</u> (ընդգծումը մերն է - Ա. Խաչատրյան) հավատարիմ ծառայեց իր տիրոջը քանի դեռ հերիքում էին ուժերը և քանի դեռ

տերը դա ոգևորում էր[1]>>: Սակայն 1920թ. մարտ, ապրիլ ամիսներից արդեն պարզ էր դառնում, որ խորհրդային իշխանությունը շուտով կտարածվի և ազդեցության տակ կառնի ողջ Անդրկովկասը, բրիտանական զորքը ստիպված պետք է լքի Ադրբեջանը՝ թողնելով նրան բոլշևիկյան հեղափոխության դեմ հանդիման: Ռաևսկին իրավացիորեն գրում է. << Չնայած նրան, որ քաղաքական իրավիճակը հիշեցնում էր գործելու պատրաստ հրաբուխի, մուսավաթական կառավարությունը մարտի վերջերին մտավ մի արկածային պատերազմի մեջ դաշնակցական Հայաստանի դեմ: Ամբողջ երկրում ընթանում են հայերի ջարդեր, զորքը խուժում է հարավ ընդդեմ Արարատյան հանրապետության: Ազգամիջյան պատերազմի անհեթեթությունն այնքան մեծ էր, մանավանդ հյուսիսային վտանգի պայմաններում (նկատի ունի Խորհրդային Ռուսաստանի գործոնը), որ Անտանտի երկրների ներկայացուցիչները ստիպված էին միջամտել» Անգլիայի գերագույն կոմիսար Ուորդրոպի, Ֆրանսիայի գլխավոր կոմիսար Մարտելի և Իտալիայի գլխավոր կոմիսար Գաբբայի կողմից հնչեցված նոտայում ասված էր, որ անհրաժեշտ է խաղաղություն պահպանել Անդրկովկասում: Կատարենք մի ուշագրավ դիտարկում. հաշտության և հանգստության կոչ պարունակող այդ նոտայի տակ դրված է նաև Անգլիայի ներկայացուցիչ Ուորդրոպի ստորագրությունը, որը ներկայացնում էր Անգլիան, այն երկիրը, որի քաղաքականությունը մեծապես նպաստեց Անդրկովկասում տարածքային վեճերի սրմանը: Ինչպես իրավացիորեն նշում է նույն Ռաևսկին. <<Բրիտանական ներկայացուցիչների նախորդ ողջ գործունեությունը մեծ չափով նպաստեց թուրք-հայկական հարաբերությունների սրմանը. վիճելի տարածքների բաժանումը, որտեղ հայ բնակչության մեծամասնություն ունեցող շրջանները միացվում էին Ադրբեջանին, իսկ թուրքական բնակչությամբ շրջանները Հայաստանին, պատճառ դարձան, որ Հայաստանի ու Ադրբեջանի միջև սկսվեր պատերազմ, երբ ընդամենը մեկ ամսից խորհրդային իշխանությունը պետք է հաղթանակեր Ադրբեջանում, իսկ կես տարի անց Հայաստանում>>: Այնուհետև հեղինակն ավելացնում է. << Ազգայնամոլական նախապաշարումներով կուրացած մուսավաթականները շարունակել են պատերազմը՝ մերկացնելով ճակատը կարմիր բանակի դեմ: Այստեղ նշանակալի դեր խաղաց անկասկած նաև այն, որ նրանք հույս ունեին Հայաստանի դեմ պատերազմի հաղթական ելքի դեպքում իրենց կառավարության ընկած վարկանիշը վերականգնել[2]>>: Ասվածը հակադարձում է ադրբեջանցի պատմաբանների այն պնդումները, թե հայերն էին պատերազմ հրահրում Ադրբեջանի դեմ:

---

[1] ***Раевский А.***, *..., с. 188.*
[2] ***Раевский А.,*** *..., с. 189.*

1920թ. գարնանը իրավիճակն ավելի է սրվում. Սուլթանովը որոշել էր արյամբ լուծել ղարաբաղյան հարցը: Ստեղծված պայմաններում 1920թ. փետրվարի 28-ին Վարանդայի Շոշ գյուղում հրավիրվեց արցախահայության 8-րդ համագումարը, որտեղ համակողմանի քննության ենթարկելով օգոստոսյան համաձայնագրի ընդունումից մինչև 8-րդ համագումարն ընկած ժամանակաշրջանի դեպքերը, փաստել, որ Ադրբեջանի իշխանությունը ոչ մի կարգ ու կանոն չի կարողացել հաստատել Ղարաբաղում, այլ ընդհակառակը, պատճառ է դարձել անիշխանության[1]: Համագումարը լիովին արտահայտվեց Հայաստանի Հանրապետության հետ միավորվելու օգտին: Հայոց պատմության արյունալի մի էջը կապվեց 1920թ. մարտ և ապրիլ ամիսներին տեղի ունեցած արյունալի իրադարձությունների հետ, երբ Սուլթանովի գիտությամբ մահմեդական խուժանը չտեսնված և արյունալի սպանդ կազմակերպեց Շուշիում, որին ոչ պաշտոնական տվյալներով զոհ գնաց շուրջ 8000 հոգի: 1920թ. ողբերգական իրադարձություններից քիչ անց խորհրդային իշխանությունը հաղթանակեց Ադրբեջանում: Անգլիան ստիպված էր լքել տարածաշրջանը: Ինչպես նշում է Ռանսկին.<< Բրիտանական առյուծի ցատկը Կասպից ծովի ափ չհաջողվեց>>:

Ի մի բերելով քննված իրողությունները՝ կարող ենք կատարել մի քանի կարևոր եզրահանգումներ.

1. 1918թ. հռչակված Ադրբեջանի հանրապետության ստեղծումը պայմանավորված էր թուրքական պետության հեռագնա գաղափարախոսությամբ և կոչված էր Ադրբեջանի ստեղծմամբ իրականացնել պանթուրքիզմի այլընտրանքային՝ թուրքիզմի կամ ադրբեջանիզմի տեղային արտահայտությունը: Ազգային ինքնագիտակցության գործոնը առկա չէր և չէր հանդիսանում պետության ստեղծման հիմքը: Նշվածը պարզ երևում է նաև ադրբեջանական պատմաբանների աշխատություններում:

2. 1918թ. ստեղծված Ադրբեջանի զավթողական հավակնությունները հայկական տարածքների և հատկապես Լեռնային Ղարաբաղի նկատմամբ պայմանավորված էին այդ պետության ստեղծումն առաջ բերած գործոններով՝ մասնավորապես պանթուրքիզմի գաղափարախոսությամբ և Ադրբեջան-Թուրքիա անմիջական կապի ապահովման անհրաժեշտությամբ: Ադրբեջանի տարածքային հավակնությունները անհիմն են հենց այն պարզ պատճառով, որ պետական սահմաններ չունեցող և Թուրքիայի օգնությամբ ստեղծված պետությունը չի կարող հավակնել այլոց պատմական տարածքներին:

---

[1] *Տե՛ս **Հարությունյան Հ.,** նշվ. աշխ., էջ 207:*

3. Ադրբեջան-Թուրքիա տարածքային հավակնություններին ի պատասխան ուշագրավ գործոն են արցախահայության ազգային ինքնորոշման իրավունքն արտահայտող շուրջ 8 համագումարները, որոնցում, չնայած Արցախում տեղի ունեցող արյունալի դեպքերին ու բռնություններին, վերջիններս դեմ արտահայտվեցին Ադրբեջանի իշխանությունն իրենց վզին փաթաթելու ձեռնարկումներին: Ադրբեջանցի պատմաբանները միտումնավոր լռում են արցախահայության հրավիրած 8 համագումարների մասին՝ միայն ներկայացնելով 7-րդը, որում ընդունվեց համաձայնագիր՝ ժամանակավոր ընդունելու Ադրբեջանի իշխանությունը: Ադրբեջանական պատմագիտությունը միտումնավոր կերպով շրջանցում է համագումարում ձեռք բերված որոշման իրական դրդող պայմանների և նախադրյալների մասին խոսելուց:

4. Բնական է, որ ադրբեջանական պատմագիտական միտքը հենված է հենց նույն պանթուրքիստական գաղափարախոսության վրա: Ադրբեջանական պատմագիտության մեջ բազմաթիվ փաստարկներ կան հենց Ադրբեջանի ստեղծման և որդեգրած քաղաքականության շարժառիթների և նախադրյալների մասին: Դրանց հրապարակումը ևս մեկ անգամ ապացուցում է 1918թ. ստեղծված այդ պետության՝ ընդդեմ հայկական պետության զավթողական քաղաքականության մասին:

Գրականություն

1. **Խատիսյան Ա.**, Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը, Երևան, 1968, էջ 86:
2. **Հարությունյան Հ.**, Լեռնային Ղարաբաղը 1918-1921թթ., Երևան, 1996:
3. **Մանասյան Ա.**, «Ինչու ադրբեջանական հանրապետության ցեղասպանական վարքը արտացոլված չէ նրա քաղաքական նկարագրում», «Բանբեր Երևանի համալսարանի, Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2018, № 3 (27), էջ 21-25:
4. **Ղարիբյան Ա.**, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1918-1920թթ. և Մեծ Բրիտանիան, Երևան, 2012:
5. **Алиев И.**, Нагорный Карабах. История, факты, события, Баку, 1996
6. **Балаев А.**, Мамед Эмин Расулзаде/1884-1955/, Москва, 2009

7. Ахамалиева Н., Азербайджанская демократическая республика/1918-1920/, Б., 1998
8. **Гасанлы Дж.,** Русская революция и Азербайджан: Трудный путь к независимости/1917-1920/, Москва, 2011
9. **Исмаилов Э**., Очерки по истории Азербайджана, Москва, 2010
10. **Кочарли Т.** , К истории карабахского вопроса/ вымыслы и действительность/, Баку, 2009
11. **Понамарев В**., Социально-экономические причины возникновения межэтнического конфликта в Нагорном Карабахе и вокруг него в конце 1980-х- начале 1990-х гг
12. **Раевский А**., Английская интервенция и мусаватское правительство, Баку, 1927
13. **Муса Марджанлы**, Нагорно-Карабахская проблема с позиции геополитики. Аналитический ракурс, Санкт-Петербург, 2009 .

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Մ.Ավանեսյանը: